ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2026թ. թիվ 220-Ա

Ա.ՍԱՐԿԻՍՈՎԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի և Արթուր Սարկիսովի միջև 2021 թվականի ապրիլի 5-ին կնքված աշխատանքային պայմանագրի 7.1 կետը և հաշվի առնելով ծանուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Արթուր Վագիֆի Սարկիսովին 2026 թվականի ապրիլի 6-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2021 թվականի ապրիլի 5-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ձյունաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Արթուր Սարկիսովի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4.3-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը ստորագրվելուց հետո երեք օրվա ընթացքում ծանուցել հասցեատիրոջը պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, էլեկտրոնային փոստի կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. ապրիլի 3
ք.Վանաձոր